Յր=302 հ. թ. համապատասխանում է 853–854 թ.: Այս ժամանակ իշխան էր սակայն Սահլ Սմբատեան, Յովանիսի ենթադրեալ հայրը: Սահլը գերի բռնուեց Բուղայի ձեռքը միւս իշխանների հետ եւ քշուեց Սամառա: Ցայտնի չէ, թէ դարձաւ ողջամբ թէ կորաւ: Եթէ Սահլի կալանաւորումը հաշուենք նոյն 853–4 թուին, երբ Բուղան կռւում էր Եսայի Աբումուսէի հետ, կարելի է ընդունել որ Յովհաննէսը նրա տեղն էր անցել եւ ուրեմն արձանագրութեան համանուն անձը նոյն ինքն է:

Սակայն, Կաղանկ. նորագիւտ հատուածում Յովհաննէսին նայող կտորը դրուած է 387 թուին, յետ յիշատակելու Ամորիայի արշաւանքը, հ. 387=838–9 թ.: Հետեւապէս Յովհաննէս տէր տերանց էր աւելի վաղ քան 853–4 թիւը, քան Սահլի գերութիւնը: Այս պարագան ընդունակ է կասկած յարուցանել, արդեօք Յովհաննէսը իրա՞ւ Սահլի որդին է թէ մերձաւոր ազգականը, եւ եթէ որդին է, արդեօք նո՞ յնն է Մուաւիայի հետ:

Մի բան անկասկած է, որ Յովհաննէսը արիւնով էր իշխանութիւն ձեռք բերել եւ որ ինքն է Համամ կոչուած թագաւորը: Համամի որդին էր Ատրներսեհը, այն որ յիշատակում է Յովհ. կաթողիկոսը (էջ 119), թագաւոր անուանելով, մինչդեռ Համամին գիտէ մեծ իշխան տիտղոսով: Ատրներսեհը իշխում էր «ըստ արեւելից հիւսիսոյ Կովկասու», կամ «ի կողմանս արեւելեայ Աղուանից» եւ աւելացնում է նոյն պատմագիրը, «զի եւ նոքա ի ժողովրդենէ մերմէ եւ խաչն արօտի մերոյ են»:

Ատրներսեհի որդին էր Իշխանակ կամ Իշխանիկ անուն թագաւորը, որ յիշւում է Անանիա կաթողիկոսի թղթի մէջ:

Տասներորդ դարու կէսում Անանիա կաթողիկոսը գնաց Աղուանից աշխարհը եկեղեցական վարչական դժուութիւնները հարթելու նպատակով եւ այս առթիւ տալիս է տեղական իշխանների անունները իր Ցաղագս ապստամբութեան տան Աղուանից գրութեան մէջ. «Ունէր զաթոռ թագաւորութեան յայնժամ Իշխանակ, որդի տեառն Ատրներսեհի, թոռն երանելոյն Համամայ, բարեպաշտ թագաւորին Աղուանից եւ էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն» («Արարատ», 1897, Մարտ ամիս):

Վրաց Տարեգիրքին ծանօթ է Իշխանիկ անունով մի անձն, որ տէր էր Հերեթի եւ որի համար ասում է նոյն յիշատակարանը, որ Հերեթի մինչեւ նրա ժամանակը աղանդաւոր էր եւ չնորհիւ Իշխանիկի մօր Դինարին ընդունեց ուղղափառութիւն (Brosset, P. 279):

Այս տեղեկութեամբ Իշխանիկը նոյնանում է Անանիայի թղթի Իշխանիկին, որը քաղքեդոնականութիւն էր ընդունել: Գիտենք, որ Սահլը Շաքէի իշխան էր: Նոյնն էին եւ նրա յաջորդները՝ Ատրներսեհ եւ Իշխանակ (կամ Իշխանիկ): Հերեթը ընկնում է Շաքէի շրջանը եւ ուրեմն աշխարհագրական արգելք եւս չկայ մեր ենթադրութեան:

Տարեգիրքը համարում է Իշխանիկին քեռորդի իշխանաց իշխանի՝ Գուրգէնի: Անանիա կաթողիկոսը թւում է հետեւեալ իշխաններին հ. թ. 407=958 թուին.

Աշոտ թագաւոր հայոց Մեծաց,

Իշխանակ թագաւոր Աղուանից, որդի Ատրներսեհի,

Սենեքերիմ, որդի Գրիգորի Խաչեան իշխանի,

Վաչագան Գորոզուաց իշխան

Գուրգէն Արեւելեաց իշխան:

Մեզ այնպէս է թւում, որ Տարեգրքի Գուրգէնը, Իշխանիկի քեռին, նոյն անձն է, ինչ որ այստեղ յիշուած Գուրգէն Արեւելեաց իշխանը: Սրա քրոջ Դինարի ամուսինը յայտնի չէ Տարեգրքին: Եթէ մեր համեմատութիւնը ստոյգ է, դա՝ Ատրներսեհն էր, Համամի որդին եւ Իշխանիկի հայրը: Դինարը վրաց իշխանուհի էր եւ հարս գալով Համամի տունը, ջանացել է պատուաստել վրական դաւանանքը, այսինքն՝ քաղքեդոնականութիւնը, նախ իր որդուն Իշխանիկին եւ նրա միջոցով ամբողջ երկրին՝ Հերեթին, եւ յաջողել է: Յովհ. Կաթ. իրաւունք ունէր ասելու, որ նրանք մեր ժողովրդիցն են եւ մեր արօտի խաչն, քանի որ այն ատեն դեռ հայ եկեղեցուն էին պատկանում եւ